

իշխանութիւն հզաւր առաւել քան զքոյր որ ունիս. բայց վասն անպիտան եւ զարշելի արինացոյ քոց զոր ունիսդ՝ դու ինքնին զլիսովին որ թագաւորդ ես, եւ ամենեքեան որ զայդ արեւնս ունիք՝ մեռեալ համարեալ եք յաջս իմ, եւ ոչ կենդանիք. եւ զպատիւս քո եւ զփառս՝ անարգանս համարիմ եւ մանկտւոյ ծաղր եւ կատականս»:

26 Եւ լուեալ զայսպիսի բանս պատգամաւորին ի սրբոյ կաթողիկոսէն Յայոց Գիւտայ՝ ասէ ցերանելին. «Թէ արդարեւ ի վերայ դորին բանից պնդեալ կամ՝ ապա արդար ասէիր¹, թէ չիշխես տանել զասացեալս իմ առ թագաւորն, եւ իրաւ ասէիր. զի ոչ ուրուք երբեք այդպիսի բանս ստամբակութեամբ յղեալ է առ այր թագաւոր. բայց տե՛ս, թէ հնար է փոխել զխաւսսդ², ուշիմ լեր»։ 27 Եւ սրբոյն պատասխանի արարեալ ասէր. «Տեսանե՛ս, զի դու ընդդիմանաս պատուիրանին Աստուծոյ, եւ չերկնջիս. վասն զի դուք ասէք, թէ որ ոք զիրաման³ թագաւորին լուծանե՛ զԱստուած անարգէ. եւ դու ասացեր, թէ թագաւորաց արեւնք են՝ չիշխել պատգամաւորի նուազեցուցանել բան մի ի բանից առաքողին եւ կամ առաւելու։ 28 Արդ՝ ե՛րթ ասա՛ զոր լուար յինէն. քանզի ինձ ոչ է հնար խորհել այլ ինչ եւ կամ ասել»։

29 Եւ երթեալ պատգամաւորն առաջի թագաւորին՝ ասէ ցթագաւորն. «Ոչ իշխեմ ես զխաւսեցեալս առն յանդգնաբար երկրորդել առաջի ձեր, բայց եթէ ի ձեռք հրաման առնում»։ 30 Եւ հրամայեալ թագաւորին ասել համարձակապէս զամենայն լուեալսն առանց երկիւղի, եւ ի պատմել⁴ այնուհետեւ մի ըստ միոյ՛ զամենայն բանս առն Աստուծոյ Գիւտայ, եւ լուեալ թագաւորին⁵ զամենայն աներկիւղապէս խաւսեցեալսն⁶ Գիւտայ՝ ի զայրացումն սրտմտութեան գրգռեալ, կամեցաւ տալ հրաման խստութեամբ. եւ յանկարծակի⁷ դադարեցուցեալ զինքն՝ առ վայր մի լռեաց. եւ ապա սկսաւ խաւսել եւ ասէ. «Զէ հնար. եթէ ոչ՝ կատարին⁸ կամք խնդրոյ նորա, զոր նայն կամի. եւ ոչ տամ համբուրել քրիստոնէից զկապանս նորա, եւ ոչ երկիր պագանել ոսկերաց նորա, որպէս սովորութիւնն։ 31 Լուեալ է իմ զպաշտամանց նոցա, թէ չառնեն զայն պատիւ կենդանեաց, զոր այդպիսի մեռելոյ առնեն։ 32 Բայց ասա՛ ցնա⁹, թէ այդմ պատուոյ չտամ քեզ պատահել, զոր դու ցասուցանելով

1 2. *Նախ*՝ արդարասեր էիր, *ապա*՝ նոյն գրչով ուղղած այսպէս

2 2. զխօսդ

3 2. զիրամանս

4 ՏՏ. եւ պատմել

5 ՏՏ. թագաւորն

6 2. խօսեցեալ

7 Գտ. խստութեամբ. յանկարծակի

8 Ատ. չէ հնար եթէ՝ ոչ կատարին. ԲԳտ. չէ հնար եթէ ոչ կատարին

9 2ՏՏ. բայց ասաց նա